California's Child Support Program (Կալիֆորնիայի Երեխաների Օգնութեան Ծառայութիւնների Բաժնի ծրագիր)՝

Տեղեկության աղբիւր ծնողների համար...

# Օգնութիւն վերջերս վաղաժամկէտ պայմանական բանտից ազատուածների (Paroled) համար







The Department of Child Support Services (DCSS) (Երեխաների Օգնութեան Ծառայութիւնների Դեպարտմենտը) պատրաստ է օգնելու ձեզ ունենալու յաջող վերամուտ: Մենք տարբեր միջոցներով կարող ենք ձեզ օգնել դիմագրաւելու ձեր երեխայի ապրուստադրամին կապվող խնդիրները եւ օգնելու որ կարողանաք ձեր կեանքը նորից ճիշտ ուղղության վրա դնել:

## Նորից ձեր կեանքը ճիշտ ուղղության վրա դրէք՝

- **Վերականգնէք ձեր Վարորդական իրավունքի եւ այլ մասնագիտութիւնների իրավունքի Վկայականները**
  Զանգահարէք մեզ կամ այցելէք մեր գրասենեակը իմանալու թէ ինչ ենք կարող անել ձեր վարորդական իրավունքի վկայականը վերականգնելու եւ օգնելու ձեզ նորից ձեր կեանքին ճիշտ ուղղության վրա դնելու համար:

- **Փոփոխութեան ենթարկէք ձեր երեխայի ապրուստադրամի որոշված գումարը**
  Եթէ չէք կարողանում վճարել ձեր երեխայի ապրուստադրամը որովհետեւ գումարը շատ բարձր է ձեր համար, հնարաւոր է որ մենք կարողանանք փոփոխութեան ենթարկել ձեր երեխայի ապրուստադրամի դատական որոշումը: Մեր գրասենեակը գալու ժամանակ Ձեր հետ բերէք ձեր բոլոր եկամուտների փաստաթղթերը:

- **Ցածրացրէք ձեր երեխայի ապրուստադրամի վելֆերի նպաստի մասի պարտքը**
  Եթէ ձեր պարտքը երեխայի ապրուստադրամի վճարման այն պատճառով է որ ձեր երեխան/երը վելֆեր են ստացել, հնարաւոր է որ մենք կարողանանք ձեր պարտքի մի մասը պակսեցնել:

- **Օգնել ձեզ աշխատանք գտնելու**
  Հնարաւոր է որ մենք կարողանանք ձեզ ուղեգրելու աշխատանք փնտռելու կենտրոններ, որոնք կարող են ձեզ օգնել ըեզումէ (resumé) գրելու, աշխատանքային հարցազրոյցների փորձառութիւն ձեռք բերելու եւ աշխատանք փնտռելու:

- **Վերամիացէք ձեր երեխաներին**
  Մենք կարող ենք տրամադրել ձեզ ընտանեկան օրէնքների կլինիկաների հեռախօսահամարներ, որոնք կարող են ձեզ օգնել:

*Զանգահարէք Երեխաների Օգնութեան Ծառայութիւնների Տեղական Գործակալության 1-866-901-3212, կամ ծանր լսողություն ունեցողների համար՝ TTY: 1-866-399-4096*

## *Մենք կարող ենք օգնել.*

Child Support Directors Association
*A Coalition of Experts Collecting Billions for California's Children*

California Department of Child Support Services

*"Երեխայի ապրուստադրամ... Ներդրում մեր երեխաների ապագայի համար"*

**CHILD SUPPORT DIRECTORS ASSOCIATION**
(Երեխաների Օգնութեան Դիրեկտորների Միություն)
www.csdaca.org